ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԲՈԼՈՐԻ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԽՆԴԻՐՆ Է

Արտակարգ դրության պայմաններում անդրկովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքի կայարաններում վագոնների բեռնաթափման աշխատանքների ընթացքը քննարկվեց Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցի հրավիրած խորհրդակցությունում:

Խորհրդակցությանը մասնակցում էին կառավարության նախագահի տեղակալները, տարբեր մինիստրությունների, գերատեսչությունների ու ծառայությունների ղեկավարները, որոնք մոբիլիզացված են վագոնների բեռնաթափման, պարապուրդներից երկաթուղային տրանսպորտի ազատման, վագոնաշրջանառության արագացման օպերատիվ աշխատանքի կազմակերպման համար:

Արտակարգ պայմաններում աշխատանքի մեկ շաբաթվա ընթացքում հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 1-ը, հանրապետության կայարաններում վագոնների բեռնաթափումը փոքր-ինչ բարելավվել է: Օրական միջին հաշվով բեռնաթափվում է ժողովրդատնտեսական տարբեր բեռների՝ շինանյութերի, վառելիքի, տեխնոլոգիական սարքավորումների, սննդամթերքի ու արդյունաբերական ապրանքների ավելի քան երկու հազար վագոն: Օրական այդքան վագոն առաջին անգամ է բեռնաթափվում տարերային աղետից հետո: Աշխատանքը լավ է կարգավորված Երևանի, Կիրովականի, Մասիսի, Աբովյանի, Իջևանի, Կարմիր բլրի, Հոկտեմբերի և այլ երկաթուղային կայարաններում: Այդ կայարաններում մոբիլիզացված են բոլոր ռեզերվները, անհրաժեշտության դեպքում վագոնների բեռնաթափման և բեռների փոխադրման գործում ներգրավվում են աշխատավորական կոլեկտիվներն ու նրանց փոխադրամիջոցները:

Դարձյալ իրավիճակը տագնապալի է Լենինականի հանգույցի Լենինականի, Արևիկի և Բայանդուրի կայարաններում, և մասնավորապես՝ Սպիտակի կայարանում:

Այդ կայարանների ռիթմիկ աշխատանքը դանդաղում է շինարարական կազմակերպությունների վատ աշխատանքի պատճառով, որոնք խախտում են իրենց հացեագրված շինանյութերի ու սարքավորումների բեռնաթափման ժամկետները: Չնայած արտակարգ դրության ժամանակամիջոցում շինարարական աշխատանքները դադարեցնելու և բոլոր կոլեկտիվներին, նրանց տեխնիկան ու փոխադրամիջոցները վագոնների բեռնաթափման և բեռների անհապաղ դուրսբերման համար մոբիլիզացնելու մասին կառավարության որոշմանը, շինարարական շատ կազմակերպությունների ղեկավարներ չեն կատարում այդ որոշումը:

Խորհրդակցությունում ընդգծվեց, որ ստեղծված արտակարգ իրավիճակում առանձնապես անբարեխղճորեն են աշխատում «Հայհյուսինարևմուտշին», «Հայուրպսիբշին», «Մոսհատուկշին», «Հայհարավշին», «Հայէներգաշին» և այլ շինարարական կոլեկտիվների ղեկավարները: Այդ կազմակերպությունների կոլեկտիվները հոգ չեն տանում բեռների դուրսբերման մասին, որոնց զգալի մասը թափված է գծերի միջև և կայարանային ծառայությունների աշխատանքի կազմալուծման սպառնալիք է ստեղծում:

Առանձնապես բարդ իրադրություն է ստեղծվել Բայանդուր կայարանում, որտեղ կուտակվել է մի քանի տասնյակ հազար տոննա բեռ: Այստեղից ապրիլ-մայիսից երկաթբետոնե արտադրանքն ու մետաղակոնստրուկցիաները չի տեղափոխել «Լենինգրադշինը», հունիսից խողովակներն ու մետաղարտադրանքը չի տեղափոխել «Հայհարավշինը», հուլիսից երկաթբետոնե արտադրանքն ու մետաղակոնստրուկցիաները չի տեղափոխել «Հայուրպսիբշինը» և այլ կազմակերպություններ:

Վիճակն առանձնապես ծանրանում է նրանով, որ այս օրերին, երբ բոլոր կազմակերպությունները լիովին ապահովված են տրանսպորտով ու վառելիքաքսանյութերով, ընդրանք շարունակում են գծերի միջև թափված թողնել զանազան բեռներ:

Վագոնների բեռնաթափման հստակ աշխատանքի կազմակերպման գործում որոշակի մեղք ունեն նաև երկաթուղայինները, որոնք բեռնատեղերին ժամանակին չեն տեղեկացնում բեռների ստացման մասին, ժամանակին չեն մատուցում բեռնված վագոնները և բեռնաթափումից հետո չեն հեռացնում դրանք:

Շաբաթվա ընթացքում հանրապետության երկաթուղային կայարաններում նորմատիվից դուրս կուտակված 3000 վագոնից հաջողվել է դուրս բերել 1200-ը:

Որոշելով առաջիկա օրերի առաջադրանքը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցն ասաց, որ հանրապետություն եկող գծերում դեռևս կանգնած է Հեռավոր Արևելքից, Մերձբալթիկայից և երկրի այլ ռեգիոններից ուղարկված 21 հազար վագոն:

Դրանք արագորեն ստանալու համար հարկավոր է մոտ օրերս լիովին վերացնել գերնորմատիվային վագոնների առկայությունը, մեծացնել դրանց շրջապտույտը, կանաչ ճանապարհ բացել մթերքով, վառելիքով, ժողովրդական ըսպառման ապրանքներով բեռնված 420 գնացքի ընդունման համար:

Այդ նպատակով անհրաժեշտ է բարձրացնել կարգապահությունն ու կազմակերպվածությունը բոլոր մակարդակներում, ամենուրեք կարգավորել եռահերթ աշխատանքը, մարդկանց ապահովելով տաք սնունդով:

Երկաթուղայիններին պետք է ամեն ժամ օգնություն ցույց տան տեղական խորհուրդների գործկոմները, աշխատավորական և շինարարական կոլեկտիվները: Հարկավոր է աշխատել այնպես, որ բեռները չթափվեն կայարանների տարածքներում և գծերի միջև, այլ տեղափոխվեն անհապաղ, ուղղակի վագոններից:

Երկաթուղիներում ստեղծված իրավիճակի կապակցությամբ նոյեմբերի 2-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմն ու Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը անցկացրին հանրապետական սելեկտորային խորհրդակցություն, որին մասնակցում էին կուսակցության քաղկոմների ու շրջկոմների քարտուղարներ, ժողովրդական դեպուտատների քաղաքային ու շրջանային խորհուրդների նախագահներ, մինիստրությունների, գերատեսչությունների, շինարարական կազմակերպությունների և արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարներ:

Նրանց առջև խնդիր է դրված՝ վճռական միջոցներ ձեռնարկել աշխատանքներն այնպես կազմակերպելու համար, որ կայարաններում օրական բեռնաթափումը հասցվի 2400—2500 վագոնի: Միայն այդպիսի ցուցանիշների հասնելու դեպքում հանրապետությունը կարող է դուրս գալ ճգնաժամային վիճակից, ապահովված լինել սննդամթերքով, վառելիքով և այլ նյութերով:

(Արմենպրես)